

ՇԻՐԱԿԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ «ՅԱՂԱԳՍ ԱՄՊՈՑ և ՆՇԱՆԱՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բանաս. գիտ. դոկտոր Գ. Վ. ԱՐԳԱՐՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2679 ձեռագրում (971 թ.) պահպանվել է մի անանուն երկ, որն ընդօրինակված լինելով Անանիա Շիրակացու գործերի շարքում, հրատարակվել ու հայտնի է դարձել որպես Անանիա Շիրակացու թարգմանական աշխատություն՝ «Յաղագս ամպոց ու նշանաց» պայմանական խորագրով¹, նրա հայտնաբերողն ու հրատարակողը Գալուստ Տեր-Մկրտչյանն է:

Այս երկում օգտագործված աղբյուրներին առաջինն անդրադարձել է ինքը՝ Տեր-Մկրտչյանը, որը 1896 թ. բացահայտեց մի քանի ընդհանուր հատվածներ Անանիա Շիրակացու «Տիեզերագիտության» և «Յաղագս ամպոց և նշանացի» (այսուհետև՝ «Յաղագս նշանաց») մեջ: Հ. Թորոսյանը² այդ նույն թվականին իրավացիորեն ցույց տվեց, որ «Յաղագս նշանացում» հանդիպող այդ հատվածները քաղված են ոչ թե «Տիեզերագիտությունից», այլ՝ Բարսեղ Կեսարացու «Վեցօրյա ճառերից», որից իր հերթին օգտվել է նաև «Տիեզերագիտության» հեղինակը՝ Շիրակացին:

Հ. Թորոսյանի ուսումնասիրությունը, սակայն, անժանոթ է մնացել «Յաղագս նշանացի» մեր օրերի հրատարակիչներին (Ա. Գ. Աբրահամյան, Հ. Մ. Բարթիկյան) և ուսերեն թարգմանիչներին (Ք. Ս. Տեր-Դավթյան, Ս. Ս. Արեվշատյան): Այս հանդամանքը հանգեցրել է զանազան թյուրիմացությունների, որոնցից ամենամեծը՝ «Յաղագս նշանացը» հույն բանաստեղծ Արատոս Սոլացուն լեռագրելն է:

Հ. Բարթիկյանը, ծանոթ չլինելով Հ. Թորոսյանի աշխատությանը, որի մեջ արդեն ցույց էր տրված, որ «Յաղագս նշանացը» կաղմված է Բարսեղ Կեսարացու հայերեն թարգմանությունից (V դար) ընտո, սույն երկը լեռագրել է այդ թարգմանությունից շուրջ 800 տարի առաջ ապրած Արատոս Սոլացուն (315—239 մ. թ. ա.)³: Թյուրիմացության շարժառիթը հավանաբար եղել է Գ. Զարբհանալյանի մի թուղթիկ դիտողությունը, որի համաձայն Անանիա Շիրակացու աշխատություններում հանդիպում է Արատոսի «Յաղագս միաւորութեան զնդին» երկից քաղված «աստեղաբաշխական բանք»⁴: Բայց Զարբհանալյանը

1 Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, «Արարատ», 1896, էջ 100—104:

2 Հ. Թորոսյան, Անանիա Շիրակացին և «Արարատ» թերթին մի հավելվածը, «Բազմավեպ», 1896, էջ 220:

3 Հ. Բարթիկյան, Արատոս Սոլացու Διοσγρεα... աշխատության հին հայերեն թարգմանությունը, «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 331—363 (այսուհետև՝ «Բանբեր»):

4 Գ. Զարբհանալյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 318:

Արատոսի անունը տալով, անշուշտ, նկատի չի ունեցել «Յաղագս նշանացը»⁵ Լ. Թորոսյանն արդեն հայտնել է, որ «Յաղագս նշանացը» «ուրիշ բան չէ, բայց եթե՝ հավարում մի այլևայլ օղային երևույթից կամ գուշակությանց, թարգմանյալ յայլևայլ գրոց»⁶։ Այս եղբայրացության օգտին են խոսում ամենից առաջ Բարսեղ Կեսարացու «Վեցօրյա ճառերի» և «Յաղագս նշանացի» ընդհանուր հատվածները։

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

Ճառք, Վեցերեկ, 1830, էջ 115.

1

Յորժամ, դարձեալ. ընդ երեկոյս
կարմրանալեն երկինք՝
զպարզոյ յայտ առնեն
և յորժամ ընդ առաւօտսն կարմրանան՝
զանձրեւի նշան ցուցանեն։

2

Յորժամ ընդ ծագել Արեգականն
մթազոյն ելանիցէ և արեան և
կայծական նշանակ ունիցի ճառագայթիւք
լստ փոփոխմանց խստաշունչ օղոցն,
և թէ ի նմին կերպարանս կացցէ
օղն պղտորեալ և յուզեալ ոչ յստակեացի
և գոյնն մրազոյն ոչ ւրասցի
և հողմք խստաշունչ ևս յաւելցին
և ամպն ևս քան զևս բազմացի
զերկար խոնաւալուզից և զսաստիկ
անձրեաց յայտ առնեն։

3

Յորժամ յամպոյ յամպ մտանիցէ
և ելանիցէ Արեգակն՝
զչերմակիծ շող ամպն յերկիր
առաւելով՝ զխոնավութիւն օղոցն
յայտ առնէ։

4

Յորժամ աղեղն յամպս երևեացի
երվն երվն զունով՝ զգաւազանսն
օգելով՝ զսաստիկ անձրեաց և
զղողացուցիչ յորդուեանց յայտ առնէ։

«ՅԱՂԱԳՍ ՆՇԱՆԱՑ»

Շիրակացու մատենագրութիւնը, Երևան,
1944, էջ 309.

1

Յորժամ ընդ երեկոյս
կարմրութիւն լինի յերկրին՝
զպարզ նշանակէ,
և յորժամ ընդ առաւօտս՝
անձրև նշանակէ։

2

Յորժամ ընդ ծագել Արեգակն
մթազոյն ելանիցէ և նման արեան
ունիցի զճառագայթսն,

թէ ի նմին յամիցէ և
օղն յուզեալ՝ ոչ յիստակեացի

և ամպն⁷ ևս քան զևս բազմանայցեն⁸
և օղն խստաշունչ յաւելցին՝
զսաստիկ
անձրեաց յայտ առնեն։

3

Յորժամ Արեգակն ջերմ շողիւք և
ի վերայ զլիսոյն որպէս հուր լուցանէ
և մանաւանդ ամպ յամպ մտանէ ջերմ
նառագայթիւք՝ զամպոց նշանակէ։

4

Յորժամ աղեղն յամպս երևի՝
զսաստիկ անձրեացն նշանակէ
և վարատէ զխստութիւնն։

⁵ Լ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 220.

⁶ Տպ. սվիդեալ։

⁷ Տպ. «ամպ», Լ. Թորոսյանն ուղղել է «ամպքն»։

⁸ Ձեռագրում՝ «զամպոց». Լ. Թորոսյանն ուղղել է «անձրեաց»՝ հենվելով Բարսեղ Կեսարացու վրա։

Ցորժամ շուրջ բակ ունիցի
 Լուսինն ամպոց և ունիցի
 մոռլ զԱրեղական ամպոց՝
 Գուրբ բազումբ յօդոց յերկիր առափին կամ-
 զառամուր փխ
 զդառնաշունչ բբոց ամբոխելոց
 յայտ առնենու

Յորժամ լուսինն բակ ունիցի
յամպոց և մոայդ զԱրեգական
ունիցի յամպոց չուրք բաղումք
հեղուն յերկիր և կամ զամբոխումն
օրոց դառնաշունչ նշանակէ:

6

Յորժամ ի մանկիկեղչեսն զնշանակ
կարմրութեան կամ զմթութիւն⁹
ունիցի՝ չուրբ բազումբ յամպոց
յերկիր առաին և հարաւ յորդաշունչ
բռնութեամբ յօդս բարբառի:

6
Յորժամ յեղչեանս խաւսի կարմրութիւն
և մթութիւն երևի՝ շուրջ բազումք
հեղուն յերկիր և հարաւ բոնութեամբ
յօղս բարբառի:

Ինչպես տեսնում ենք, «Յաղագս նշանացի» հեղինակն օգտվել է Կեսարացու հայերեն թարգմանությունից, այսինքն՝ նա իր ձեռքին ունեցել է արդեն պատրաստի մի թարգմանություն, որը ոչ մի կապ չունի Արատոս Սուլացու բանաստեղծության հետ:

հնդրո առարկա օգերևութաբանական ժողովածուն, ըստ իր մեջ օգտագործված աղբյուրների, բաժանվում է երկու որոշակի մասերի: Առաջին և հիմնական մասն ընդգրկում է 61 օգերևութաբանական նշան, որոնց բովանդակությունը մասամբ համընկնում է Արատոսի 422 տողանոց բանաստեղծության 51—261 տողերի բովանդակությանը: Երկրորդ մասը բաղկացած է 17 օգերևութաբանական նշաններից, որոնցից վեցը, ինչպես տեսանք, բաղված են Բարսեղ Կեսարացուց, իսկ մնացած 11 նշանների աղբյուրները մեզ ծանոթ չեն:

Բարսեղ Կեսարացիին ունի եղանակի կանխագուշակման մասին այսպիսի մի տեղեկություն. «Յերեքօրեայ ժամանակի յորժամ յստակ և պարզ և վճիտ երեքեցի (լուսինն— Գ. Ա.) զյստակ պարզոյ յայտ առնէ»¹⁰։ «Յաղագս նշանացի» հեղինակը այս տեղեկությունը պետք է զետեղեր իր ժողովածուի երկրորդ մասում, որովհետև Բարսեղ Կեսարացուց բաղված բոլոր տեղեկությունները նա զետեղել է այդ մասում։ Սակայն նա հիշյալ տեղեկությունը առհասարակ բաց է թողել։ Սա Բարսեղ Կեսարացու միակ օգերևութաբանական նշանն է, որ «Յաղագս նշանացի» հեղինակը չի վերցրել ժողովածուի մեջ։ Պատճառն այն է, որ նա նման մի նշան արգեն գտել էր Արատոս Սուլացու երկը հիշեցնող աղբյուրում («Յորժամ երեքօրեայ երեկի լուսինն և եղջերքն վերաձգեալ և յստակ և սուրբ լինի»՝ նշանակէ զօդ պարզութեան»)¹¹։ Կրկնությունից խուսափելու համար նա բավարարվել է առաջին մասում գտնվող նշանով և երկրորդ մասի մեջ այլևս չի ներմուծել Բարսեղ Կեսարացու նշանը։ Այսպիսի բծախնդիր աշխատանքի շնորհիվ է, որ առաջին և երկրորդ մասերի մեջ չենք գտնում իրար կրկնող ոչ մի կետ։

9 Տպ. «Դժբարութիւն ունեցի մթութիւն»։ Ուղղեցինք ըստ Անանիա Շիրակացու և Հակակոյան բառարանի, որոնք օգտվել են Բարսեղ Կեսարացու ափելի ընտիր ձեռագրերից։

10 Բ արսեղ Կենսարացի, Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն, Վենետիկ, 1830, էջ 115:

11 թձաղազս ամպոց և նշանաց», մաս առաջին, նշան առաջին, ՏՆ՝ Ա. Գ. Ա քր ա ճ ա ժ -
յ ա ն, Անանիա Շիրակացու մատենադրությունը, Երևան, 1944, էջ 304 կամ՝ «Բանբեր», էջ 341.
տող 1—2:

Նկատելի է նաև, որ ժողովածուի հեղինակը չի կամեցել խախտել առաջին մասի համար հիմք ծառայած իր աղբյուրի ամբողջությունը, այլապես նա կարող էր այդ մասի մեջ ներմուծել նաև մյուս աղբյուրներից քաղած իր տեղեկությունները և ոչ թե դրանք կառանձնացնել բերկրող մասում:

Երկրորդ մասը նույնպես ունի նյութերի դասավորության իր ուրույն եղանակը: Բարսեղ Կեսարացուց քաղված վեց կետերն այստեղ ոչ թե ղեկավար են այն միևնույն խառն վիճակում, ինչպես Կեսարացու աշխատության մեջ է. այլ կանոնավոր կերպով վերադասավորված են ըստ երկնային նշանների և մեջընդմեջ հարմարված ու տեղադրված են մյուս տասնմեկ կետերի միջև, համապատասխան տեղերում: Եթե երկրորդ մասը կազմելիս հայ գիտնականը նույնությամբ կրկնել առաջին մասի սկզբունքը, այսինքն՝ չխախտել իր աղբյուրների կառուցվածքը և յուրաքանչյուր աղբյուրից քաղված կետերը «Յաղագս նշանացում» վեցերորդ առանձին, այս դեպքում երկրորդ մասը կունենար նյութերի այնպիսի խառն դասավորություն, երբ միևնույն լուսատուին վերաբերող տեղեկությունները ցրված կլինեին տարբեր տեղերում: Օրինակ՝ Կեսարացուց քաղված՝ Արեգակին վերաբերող տեղեկությունները կմնային այս փոքրիկ բաժնի մի առանձին աշխատությունում, մյուսները՝ առանձին: Այսպիսի ցրվածությունից խուսափելու համար և ելնելով երկրորդ մասի աղբյուրների փոքր ծավալից՝ հեղինակն այդ աղբյուրները ձուլել է իրար և կազմել ընդհանուր մի բաժին: Այսպիսով, հայ գիտնականը ժողովածուն կազմել է աղբյուրների ուշադիր և քաղմակողմանի ուսումնասիրության ու վերամշակման հիման վրա:

«Յաղագս նշանացի» առաջին մասում օգերեութարանական նշանների հերթականությունն ավելի կանոնավոր է, քան Արատոսի բանաստեղծության մեջ: Վերջինիս հունարեն բնագրի 154—212 տողերում¹² ծովային կենդանիներին ու թռչուններին վերաբերող նշանները ղեկավար են երկնային երևույթները ներկայացնող նշանների հետ խառն: Սրան հակառակ, «Յաղագս նշանացում» կանոնավոր կերպով իրար հաջորդում են թռչուններն ու կենդանիները, իսկ երկնային մարմինները գտնվում են իրենց համապատասխան բաժնում:

Բարթիկյանը «Յաղագս նշանացի» գրքի 35 տոկոսը տպագրել է շղարշով, որը մատնանշում է հայերեն և հունարեն բնագրերի տարբերությունը: Սրան ավելանում են նաև այն տարբերությունները, որոնք չեն նկատվում: Այսպես, օրինակ, Արատոսի բանաստեղծության 217—221 տողերը ներկայացված են որպես «Յաղագս նշանացին» համապատասխանող տողեր, այնինչ՝ իրականում դրանք միմյանց չեն համապատասխանում:

Արատոսը գրում է.

ἢ πού καὶ λαχέρῳα παρ' ἡμῶν πρὸς γῆν
 χεῖματος ἐργασίαν γέροισι ὑπέρβουλον
 ἢ πού καὶ πρὸς τῶν ἐμβατῶν μέγροι παρ' ἀχρῶν
 οὐ μόνον ἐκ ἀστράτης, ἢ καὶ μάλιστα παρὰ κορυμῆα,
 ἢ πρὸς τὴν ἀνέμῳ παρ' ὧν παρὰ χροῖσιν¹³.

¹² Քառերես, էջ 346—348:

¹³ Այստեղ և հետագայում թարգմանությունները կատարում ենք՝ օգտվելով հիմնականում ականավոր արատոսագետ Յոհանն Հայերի և Թոմաս և աստղագետ Շուհմախերի աշակցությամբ հրատարակված հունարեն բնագրից (Des Aratos Sternschemungen und Wetterz

Թարգմանենք հայերեն.

Եվ ևնզվից սուաջ ծովեղբին կառչում,
Ազոավն է կոռում, քաց խնում շրջում,
Կամ էլ՝ գետի մեջ գլուխ, ուս քրչում,
Մերք ողջ մարմինն է ջրում մխրնում.
Ողողվում անվերջ և քավ կոնչում:

«Յաղագս նշանացում» սրան համապատասխանում է. «Յորժամ ազոաւք առ ծովեղերք թևովք զջուրսն հարկանեն՝ գյուղմունս ամպոց նշանակէ»: Ոչ մի նմանություն: Արատոսի ոգեշունչ բանաստեղծության մեջ ազոավը կոկոռում է թրջվելու ցանկությամբ անյաղար գեղերում է «ցցուն ցամաքում», թրջում է գլուխը կամ էլ ողջ մարմնով է սուզվում ջրի մեջ, անընդհատ պտտվում է, կոնչում է հաստ ձայնով: Իսկ «Յաղագս նշանացում» այս դործողությունների փոխարեն ազոավները միայն թևով խփում են ջրին: Սա հիշեցնում է այնպիսի մի օդերևութաբանական արձակ (ոչ չափածո) ձևոնարկ, որն օգտագործված է նաև «Գիրք վաստակոցում» («Յորժամ տեսանես զազոաւսն, որ լողանան ի ջուրն՝ անձրեաց նշան է»)՝¹⁴ կամ Մատենադարանի № 1973 ձեռագրում (էջ 228. «Յորժամ ազոաւք ի գետս մխրնին ուսովքն հետ և կամ լուանին՝ զամպ նշանակէ»):

Հունական օդերևութաբանական գրականության մեջ պահպանվել են այնպիսի ձևոնարկներ, որոնց մեջ եղանակը կանխագուշակող որոշ նշաններ ներկայացված են «Յաղագս նշանացին» ավելի նմանվող ձևերով, բան Արատոսի բանաստեղծության մեջ: Այսպես, օրինակ, Թեոփրաստոսը գրում է. «Երբ արջառը գլուխը դեպի երկինք թևած օդ է կլանում՝ նշանակում է անձրև է գալու (Voss, էջ 169): Սա գրեթե բառացի համապատասխանում է «Յաղագս նշանացին» հետևյալ կետին. «Յորժամ արջառ յերկին զլխամբարձ է և հոտայ՝ անձրևս նշանակէ»: Արատոսը սրա փոխարեն գրում է (տող 222—223).

Καὶ βροχὴν τοῦ πατρὸς ὕδατος ἀνέσται
ὁ ὄρνις ἐξαναμένει¹⁵ ἀπ' αὐτοῦ ὡς πρὸς ὕδατος.

Եվ արջառներն էին սնձերից առաջ¹⁶
Երկնիվեր նայում, օդ շնչում առառ!¹⁷

Թրկու երկրի տարբերության մասին ավելի լրիվ պատկերացում կազմելու համար համեմատենք Արատոսի բանաստեղծության մի ավելի ընդարձակ

übersetzt und erklärt von J. H. Voss, Heidelberg, 1824). էջ 167 (այսուհետ՝ Voss) և նրան ուղեկցող Թարգմանություններից և ծանոթագրություններից: Նկատի ենք ունեցել նաև Լոնդոնի վերջին հրատարակությունը (Aratus, with an english transl. by G. R. Maier, M. A. London, 1955) և նրան կից ծանոթագրությունները:

¹⁴ «Գիրք վաստակոց, Թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ», Վենետիկ, 1867, էջ 12:

¹⁵ Արատոսը կրկնել է Հոմերոսի ὁ ὄρνις ἐξαναμένει (եբրկնտհայաց յեր նայելս) արտահայտությունը (Voss, 169):

¹⁶ Բառացի՝ «կեսօրվա անձրևից առաջ»:

¹⁷ Բառացի՝ «օդը (եթերը) հոտոտում»: «Առատ» բառն ավելացրել ենք մենք: Տաղաչափական նկատառումներով կատարված այս և այլ կարգի փոփոխությունների դիմել ենք նաև նախորդ 5 և առաջիկա 17 տողերի Թարգմանության ընթացքում: Ըստ որում՝ չենք հետևել Արատոսի տաղաչափությանը:

6 Հանդես, № 1

հատված, որը Մատենադարանի «Բանբերում» դարձյալ ներկայացված է որպես
«Ճաղագս նշանացին» համապատասխանող հարադատ մաս:

- καὶ κοῖλῃς μύρμινοι ὄχευς ἐς ὅσα πάντα
 225 θάσσον ἀντηνεχάντο· καὶ ἀρῦροισι ὠφθεν ἰούλοι
 τεύχε' ἀνερποντες, καὶ πλάζομενοι σχωλήχες
 χεῖνοι, τοὺς καλέουσι μελαίνης ἔντερα γαίης.
 καὶ τιθαὶ ὄρνιθες, ταὶ ἀλέκτορος ἐξεγενοντο,
 ἐν ἐπιειρίσσαντο καὶ ἐχρῶξαν μάλα φωνῇ,
 230 οἷον τε σταλαὸν ψοφεῖ ἐπὶ ὕδατι ὕωρ.
 ὅτ' ποτε καὶ χοράκων γενεαί, καὶ φύλα χολοίων
 ὕδατος ἐρχομένοιο Δίος παρὰ στήμ' ἐγενοντο,
 φαινόμενοι ἀγέλῃδ' αὖ ἱρήχεσσιν ὁμοῖον
 φθεγγόμενοι. καὶ πού χοράκες Ἰήνα σταλοῶντα
 235 σὺν ἡ ἐμιμῆσαντο, σὺν ὕδατος ἐρχομένοιο,
 ἡ ποτε καὶ χρωξάντε βαρεῖη οἰσάχι φωνῇ
 μακρὸν ἐπιρροῖζουσι, τινάσσουσι πτερὰ πύκνα.
 καὶ νῆσσαι οἰκουροί, ὑπωροψιοὶ τε χολοιοί
 ἐρχομένοι κατὰ γείτσα, τινάσσονται πτερόχεσσιν·
 240 ἢ ἐπὶ κῆμα οἰωκεῖ ἐρωοῖός, ὅξυ λεληχώς.¹⁸

Թարգմանենք.

Մրջուններն հապնեպ ծակից ձուն հանում,
 Բազմոտանին ժիւ պատով վեր ելնում,
 Եռուզեռում են անձրևաորդեր,
 Որ և կոչվում են թուխ գետնաորդեր:
 Ընտանի հավը՝ զարմից ափուրի
 Պետք է զիլ ճշա, ժիւ կտցահարի,
 Զայնով նմանվի կաթկթող ջրի:
 Ագռավ, արջնագռավ երամներն առած,
 Անձրևի գուշակ, Զևսից առափված,
 Թռչում են դաշտում, անգղի պես ճշում:
 Եվ կամ ագռավն է անձրև գուշակում,
 Զևսի կաթիլին¹⁹ ձայնով նմանվում:
 Վամ նորից ճշում, կոճշում են հար,
 Թևերը բախում, սուլում են երկար:
 Բաղ և արջնագռավ կտուրաբնակ
 Թևահարում են տան փվերի տակ,
 Եվ ձկնփաղն է սուրում դեպ կոհակ:

¹⁸ Voss, էջ 167—171: Թարգմանում ենք ըստ Voss-ի վերծանություն:

¹⁹ «Զևսի կաթիլ» արտահայտությունը թարգմանությունն է Լիդա ժալոօն-ա արտահայտության, որը որոշ ձեռագրերում հանդիպում է նաև ձուշո՝ ժալալաշո՝ (սուրբ—մեծ կաթիլ) ձևով: Ֆոսսը (Voss, էջ 171—172) հունարեն խրթին բնագրի բովանդակությունը վերծանել է այսպես. «Միտքն այն է, թե ագռավները, որպես իմաստուն թռչուններ, իրենց ձայնը նմանեցնում են խոշոր կաթիլներով գետին թափվող՝ Զևսի հորդ անձրևին»:

Սրա փոխարեն «Յաղագս նշանացն» ունի. «Յորժամ մրջմունք դձուս իւրեանց հանեն ի ծակուց՝ անձրևս նշանակէ: Յորժամ մրջմունք ժողովեալք և յորմ նստիցին՝ անձրևս նշանակէ: Յորժամ ընտանի հաւք կտուին և մեծածայր կռչեն՝ անձրևս նշանակեն: Յորժամ ճայք զմիմեամբք շրջապատին և ճչեն՝ անձրևս նշանակեն: մանաւանդ ալուալք՝ յորժամ թռչին և միմեանց ձայնս առնեն՝ անձրևս և շանթս և կարկուտս նշանակեն: Յորժամ ճայք թանձր ձայնիւ ճչեն և թևովք զօդս հարկանեն՝ անձրևս նշանակեն: Յորժամ ընտանի հաւք և ասղակտուցք և ձկնքաղք կտեն և ի բոյնս գալով շարժեն զթևս իւրեանց՝ յուղմունք ամպոց լինի: Յորժամ արագիւք ի ծովակոյս իջանեն ձայնիւ՝ անձրևս նշանակէ»²⁰:

Նմանությունը նյութի և հերթականության ընդհանրության մեջ է:

Տող առ տող մատնանշենք տարբերությունները:

224—227. «Յաղագս նշանացում» խոսվում է միայն մրջյունների մասին, իսկ Արատոսի բանաստեղծության մեջ՝ մրջյունների, բազմոտանիների, անձրերորդերի կամ թուխ գետնաորդերի մասին:

228—230. «Յաղագս նշանացում» ընտանի հավքերը կոկոում են, իսկ բանաստեղծության մեջ նրանց ձայնը նմանեցված է ջրի մեջ կաթկթող կաթիլների հանած ձայնին:

231—235. Հինգ տող բացակայում է «Յաղագս նշանացում», որի հեղինակին հայտնի չէ, որ ագռավներն ու արջնագռավները անձրևից առաջ երամներ կազմած շրջում են դաշտերով և անգղի նման կոնչում: Հայտնի չէ նաև այն, որ ագռավը այնքան լավ է կանխագգում հորդ անձրևը, որ նախքան անձրևն սկսելն ինքն արդեն սկսում է անձրևի կթկթոցին նմանվող ձայներ հանել:

231—235. Հունարեն բնագրում բացակայում է «Յաղագս նշանացի» հետևյալ օղերևութաբանական նշանը. «Յորժամ ճայք զմիմեամբք շրջապատին և ճչեն՝ անձրևս նշանակեն»:

236—237. Արատոսի բանաստեղծության մեջ ագռավները կոպիտ կոնչուցով երկու անգամ ճշալուց հետո երկար մի սուլոց են արձակում և ուժեղ թափահարում են թևերը: Այս տեղեկությունը նույնպես «Յաղագս նշանացի» հեղինակին անծանոթ է:

236—237. Բանաստեղծության սույն տողերում բացակայում է «Յաղագս նշանացի» հետևյալ տեղեկությունը. «Ագռաւք յորժամ թռչին և միմեանց ձայնս առնեն՝ անձրևս և շանթս և կարկուտս նշանակեն»:

236—237. Արատոսը շունի նաև հետևյալ տեղեկությունը. «Յորժամ ճայք թանձր ձայնիւ ճչեն և թևովք զօդս հարկանեն՝ անձրևս նշանակեն»:

238—239. Արատոսի բանաստեղծության մեջ խոսքն արջնագռավների մասին է, իսկ «Յաղագս նշանացում»՝ ասղակտուցների և ձկնքաղների:

240. Արատոսը ներկայացնում է սուր ճշուցով դեպի ալիքներն շտապող ձկնքաղին (εραδός, Ardea major, уаp.ля), իսկ «Յաղագս նշանացի» հեղինակը՝ արագիլներին:

Տարբերությունները նկատելի են ոչ միայն մեր բերած օրինակներում, այլև ամբողջ բանաստեղծության այն մյուս հատվածներում, որոնք ներկայացվել են որպես «Յաղագս նշանացի» հարազատ թարգմանություն: Դրանում համոզվելու համար բավական է համեմատել «Բանբերում» տպագրված (էջ 338—

²⁰ «Բանբեր», 349—351:

358) այն ղուղահեռ տեքստերը, որոնք կոչված են ցույց տալու հունարեն և հայերեն բնագրերի նույնությունը²¹, բայց խրականում բացահայտում են նրանց տարբերությունները:

Մատենադարանի «Բանբերի» հոգվածի վերջում հեղինակը, ելնելով երկու բնագրերի ակնհայտ հակասություններից, հայտնել է այն միտքը, թե հնարավոր է, որ «Յաղագս նշանացը» ոչ թե Արատոսի բանաստեղծության, այլ մեկ ուրիշ հեղինակի՝ Եվդոքսոս Կնիդացու (390—337 թթ. մ. թ. ա.) օգերևութաբանական ձևաչափի թարգմանությունն է: Նրա կարծիքով «Յաղագս նշանացում» առկա և Արատոսի բանաստեղծության մեջ բացակայող հատվածները հավանաբար գտնվել են Եվդոքսոսի՝ մեղ շհասած այն երկում, որի շափածո վերարտադրությունն է Արատոսի բանաստեղծությունը: «Հարց է ծագում,— դրում է Բարթիկյանը (էջ 359),— մեր թարգմանությունն ուղղակի Եվդոքսոս Կնիդացու երկի թարգմանությունը չէ՞ արդյոք, այդ ավել հատվածները (նկատի ունի վերը մեր նշած 35 տողերը— Գ. Ա.) ուղղակի Եվդոքսոսի երկից չե՞ն գալիս արդյոք, հատվածներ, որ հնարավոր է Արատոսը բաց է թողել: Եթե դա իսկապես այդպես է, հասկանալի է, որ հայերեն թարգմանության արժեքը անգնահատելի է դառնում: Եվդոքսոս Կնիդացու բաղմամբիվ աշխատություններից և ոչ մեկը մեղ չի հասել: Սա կլինի մեղ հասած նրա միակ գործը, այն էլ հայերեն թարգմանությամբ»: «Արատոսի գործի հմուտ մասնագետները պետք է ասեն իրենց խոսքը այդ հատվածների մասին»:

Իրականում, սակայն, Արատոսի գործի հմուտ մասնագետներն այստեղ ասելիք չունեն, որովհետև Արատոսի երկում բացակայող 24 կետերից միայն յոթն է, որ առնչվում է Արատոսի բանաստեղծության կամ Եվդոքսոսի հետ. մնացածը գտնվում է «Յաղագս նշանացի» երկրորդ մասում, որը, ինչպես ասացինք, կապ չունի առաջին մասի աղբյուրների հետ և քաղված է Բարսեղ Կեսարացու ճառերից և այլևայլ աղբյուրներից: Ուրեմն Եվդոքսոս Կնիդացու մեղ շհասած երկը կարող է առնչվել միայն «Յաղագս նշանացի» առաջին մասի հետ և հանդիսանալ նրա աղբյուրը: Իրականում էլ, կարծում ենք, այդ մասի հիմքում իսկապես ընկած է Եվդոքսոս Կնիդացու երկից մի հատված և դրանով է բացատրվում նշանների բովանդակության և հերթականության ընդհանրությունը:

«Մի հանգամանք ևս դրդում է մեղ,— շարունակում է Բարթիկյանը (էջ 359—360),— այդպիսի կռահում անել... Արատոսը կոնկրետ ցույց է տալիս,

²¹ Նույնությունը ցույց տալու համար, իհարկե, կարիք չկար ամբողջությամբ վերահրատարակելու երկու առանձին բնագրերը: Պետք էր յուրաքանչյուրից քաղել մեկական-երկուական օրինակներ և նրանց միջոցով ցույց տալ ամբողջի պատկերը: Հունարեն բանաստեղծությունը բաղկացած է 422 տողից և դրեթև 40 անգամ հրատարակվել է: Մատենադարանի «Բանբերում» 41-րդ անգամ հրատարակված այդ ընդարձակ հունարեն տեքստը որևէ օգուտ չի բերում:

Հոգվածում հանդիպում են մանրամասն բիրյիցրաֆիական և կենսադրական տեղեկություններ Արատոսի և նրա բանաստեղծության մասին, բայց ոչ մի բանասիրական փաստաթղթի չի բերված օգուտ այդ բանաստեղծության և «Յաղագս նշանացի» նույնության: Ընթերցողը չգիտե, թե ինչ հիմունքներով է «Յաղագս նշանացը» համարվել Արատոս Սոլացու թարգմանությունը: Հայերեն չի թարգմանված և «Յաղագս նշանացի» հետ չի համեմատված հունարեն բանաստեղծության ոչ մի տող, որից երևար, որ այդ բնագրերն ինչ-որ կապ ունեն: Հոգվածի վերջում բերված չորս բառերը («պապիր», «աղաղանչ», «կուփիր», «պատիղուն») հանդիպում են նաև այլ օգերևութաբանական աշխատություններում և Արատոսի բանաստեղծության մենաշնորհը չեն:

թե ինչ նկատի ունի $\pi\alpha\pi\tau\omicron\varsigma$ -ի տակ՝ $\gamma\acute{\epsilon}\nu\eta$ $\chi\alpha\iota$ $\pi\alpha\pi\tau\omicron\varsigma$, $\lambda\epsilon\gamma\chi\eta\varsigma$ $\gamma\gamma\epsilon\lambda\epsilon\gamma\alpha\chi\alpha\nu\theta\eta\varsigma$, այսինքն փշածաղկի սպիտակ աղվափետուրը: Հայերեն թարգմանության մեջ համապատասխան տեղում մենք կարգում ենք հետևյալը՝ Յուդամ պապիւմ ի ծովէ Ելանեն րազումք զմիմեամբք... Հասկանալի է, որ նա տալիս է $\pi\alpha\pi\tau\omicron\varsigma$ բառի ոչ արատոսյան իմաստը: Սա ցույց չի տալիս, որ Կնիդացու մոտ $\pi\alpha\pi\tau\omicron\varsigma$ բառը չէր բացատրված և դրան Արատոսն ու հայ թարգմանիչը մոտեցել են յուրովի: Այս բոլորը, իհարկե, հարցեր են, որ սպասում են իրենց հետագա լուսաբանմանը մասնագետների կողմից:

Նախ՝ մի ճշգրտում: «Յաղագս նշանացում» հունարեն բնագրի $\lambda\epsilon\gamma\chi\eta\varsigma$ $\gamma\gamma\epsilon\lambda\epsilon\gamma\alpha\chi\alpha\nu\theta\eta\varsigma$ բառերին համապատասխանում է ոչ թե քաղվածքում բերված գրաբար նախադասությունը, այլ՝ «նման է որպէս որ յորոշտուեդ ելանէ» աղավաղված հատվածը: Իսկ Բարթիկյանի նշածին մոտավորապես համապատասխանող նախադասությունը հունարեն բնագրում հետևյալն է՝ $\gamma\acute{\epsilon}\nu\eta$ $\chi\alpha\iota$ $\pi\alpha\pi\tau\omicron\varsigma$... $\gamma\omega\theta\eta\varsigma$ $\acute{\alpha}\lambda\delta\varsigma$ $\delta\pi\pi\omicron\tau\epsilon$ $\pi\omicron\lambda\lambda\omicron\iota$ $\alpha\chi\gamma\omicron\nu$ $\epsilon\pi\iota\pi\lambda\epsilon\iota\omega\varsigma$:²⁴

Թեոփրաստոսը միևնույն նշանը նկարագրում է այսպես՝ $\epsilon\acute{\iota}\nu$ $\epsilon\nu$ $\tau\eta$ $\delta\alpha\lambda\alpha\tau\tau\eta$ $\pi\alpha\pi\tau\omicron\varsigma$ $\varphi\acute{\epsilon}\rho\omicron\nu\tau\alpha\iota$ $\pi\omicron\lambda\lambda\omicron\iota$ $\omicron\iota$ $\gamma\iota\nu\omicron\mu\epsilon\nu\omicron\iota$ $\alpha\pi\omicron$ $\tau\omega\nu$ $\alpha\chi\alpha\nu\theta\omega\nu$:²⁵ Վերգիլիոսն ունի՝ „aut summa nantes aqua colludere plumus“²⁶:

Սրանք միևնույն նշանի տարբեր արձագանքներն են, բայց և՛ Թեոփրաստոսի, և՛ Արատոսի, և՛ Վերգիլիոսի համար կա մի ընդհանուր երևույթ. դա այն է, որ նրանք բոլորն էլ հողմի նշան են համարում ջրի վրա լողացող (կամ «պարող», ինչպես Վերգիլիոսն է ասում) փշածաղիկ բույսը կամ նրա սերմերը՝ «աղվամաղերը»: Իսկ «Յաղագս նշանացում» խոսքը կարծես թե կենդանու մասին է. «պապիւք ի ծովէ Ելանեն րազում զմիմեամբք»: Պետք է ենթադրել, որ հայ գիտնականի օգտագործած հունարեն ձեռագրում $\pi\alpha\pi\tau\omicron\varsigma$ -ի կողքին որպես բացատրություն եղել է հինց Արատոսի $\alpha\chi\alpha\nu\theta\alpha$ բառի ազգակիցներից մեկը և դա վերծանվել է որպես կենդանու անուն (այս բառը $\alpha\chi\alpha\nu\theta\alpha$ ՝ ձեռվ կարող էր նշանակել նաև փշոտ մաշկ ունեցող շնամուկ, իսկ $\alpha\chi\alpha\nu\theta\iota$ ՝ ձեռվ՝ կարմրակատարիկ ձնձղուկ): Կենդանու անվան հիշատակությունը տվյալ հատվածում ավելի սպասելի է, քան բույսի, որովհետև ամբողջ հատվածը վերաբերում է կենդանիներին (արագիլ, կեփուր, սագր, հաւք, ծիծառունք, գորտք, աղաղանչք և այլն):

«Յաղագս նշանացում» «պապիւք»-ին վերաբերող նշանը ունի հետևյալ «ծանոթագրությունը»՝ «նման է որպէս որ յորոշտոստ—ունդ փոշի ելանի»²⁵: Անճանաչելիորեն աղավաղված այս հատվածում մեր ընդգծած «ունդ»-ը հավանաբար աղճատումն է «ունդ» (հունդ, սերմ) բառի, իսկ «նման է որպէս, որ... փոշի ելանի» արտահայտությունը հիշեցնում է փշածաղկի աղվամաղերի կամ սերմերի՝ ծովի վրա առաջացրած այն պատկերը, որը նկարագրել են Թեոփրաստոսը, Արատոսը, Վերգիլիոսը (եթե, իհարկե, «փոշի» բառը «փուշ» բառի

²² «Բանբեր», էջ 346:

²³ Aratus, with an english transl. by G. R. Maie, M. A. London, 1955, էջ 278:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 1973, էջ 225ա, նաև՝ Վենետիկի ձեռագիրը, որի մասին տե՛ս և., Դիտողություն մի, «Բաղմավեպ», 1896, էջ 251:

աղվաղումը չէ)։ Այսպիսով՝ *παπυρος* բառի բացատրությունը ոչ թե հայ թարգմանչինն է, այլ գալիս է հունարեն բնադրից։

Քննվող և մի քանի այլ արտահայտությունների կապակցությամբ հարկ կա անդրադառնալու «Յաղագս նշանացի» ուսերեն թարգմանությանը, որի մեջ մեզ հետաքրքրող արտահայտությունը թարգմանված է այսպես. «ПТИЦЫ папюс многочисленными старыми летят с моря»²⁶։ Ինչպես տեսնում ենք, «պապյուր» բառը՝ (*παπυρος*) անվերապահորեն թարգմանված է որպես թռչունի անուն։ Իրականում, սակայն, այդ բառի որոշակի իմաստը հայտնի չէ և դա պետք է նշվեր ծանոթագրությամբ։

Խնդրո առարկա արտահայտության մեջ հանդիպող «որոշտուեդ» աղավաղված բառը, ինչպես տեսանք, առաջացել է հայերեն ինչ-որ բառի (կամ բառերի) աղճատումից։ Ռուսերեն թարգմանության մեջ, սակայն, այդ հայերեն վրիպակը դարձել է ուսերեն բառ և ներկայացվել է որպես թռչունի անուն. «летят ороштуэды»։

«Որոշտուեդ»-ից բացի ուսերեն թարգմանության մեջ է թափանցել նաև հայերեն «պատիղուն» վրիպակը։ Երկաթագիր S-ի և P-ի շփոթի հետևանքով «պարիղիովն» (*παριλία*) բառը դարձել է «պատիղիովն»։ Այս գրչական վրիպակը նույնությամբ թափանցել է ուսերեն թարգմանության մեջ և դարձել է ուսերեն բառ՝ «пагилюн» (էջ 112)։ Սույն վրիպակը պետք է սրբագրել ուսերեն *паргелни* բառով։

«Յաղագս նշանացի» կա հայերեն «աղաղակել» բառից կաղմված մի թռչնանուն՝ «աղաղանչ»։ Այս բառը նույնպես նույնությամբ մտել է ուսերեն թարգմանության մեջ և դարձել է «алаланчи» (էջ 115)։ Սա ևս պետք է սրբագրել *ололюгон* (*οιολυγον*) տառադարձությամբ։

«Աղաղանչ» և «պարիղիովն» բառերի նույնությունը՝ փակագծերում մեր նշած հունարեն բառերի հետ՝ բացահայտվել է ուսերեն թարգմանությունից հետո, Բարթիկյանի կողմից։ Հետևաբար՝ հիշյալ վրիպակները տեղի են ունեցել թարգմանիչներից անկախ։ Գրիչների անուշադրության հետևանքով բնագրից բաց է թողնված ագռավ (*αερας*) բառը և այս թռչնի մասին ասվածը վերագրվել է աղաղանչին. «Когда птицы алаланчи под утро издают крики, то это признак наступления холода. Когда они (այս «они»-ն պետք է վերաբերեր ոչ թե աղաղանչին, այլ ագռավներին—Պ. Ա.) у берега моря крыльями бьют о воду, это признак облачности» (էջ 115)։ Այստեղ և «Յաղագս նշանացի» տպագիր բնագրում բացակայող «ագռավ» բառը պահպանվել է Մաշտոցի անվ. Մատենադարանի № 1973 ձեռագրում, որը նպաստում է նաև բնագրական զանազան այլ միավորների ճշգրտման և մեկնաբանման գործին։

Պետք է ասել, որ ուսերեն թարգմանության մեջ տեղ գտած որոշ վրիպումներից կարելի էր խուսափել, եթե օգտագործվեր «Յաղագս նշանացի» հնագույն ձեռագիրը։ Սրա մեջ գտնվող որոշ հատվածների դուրս են մնացել

²⁶ А н а н и я Ш и р а к а н и, Космография, перевод с древнеармянского, предисловие и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатяна, Ереван, 1962, էջ 114։

²⁷ Այս բառը Մաշտոցի անվ. Մատենադարանի № 1973 ձեռագրում հանդիպում է «պապիկր» ձևով։

թարգմանությունից: Այսպես, օրինակ, 112-րդ էջում, «как я уже сказал» բառերով սկսվող հատվածում, չի թարգմանված հետևյալը. «յայտ է, թէ երիցս անդամ այսպէս ամպը շրջապատեն ղԱրեղակամրն»: 114-րդ էջում, «когда морские или речные птицы» բառերով սկսվող հատվածում բաց է թողնված այս միտքը. «որպէս թև հարթ ջրոյն լինիցին՝ անձրևս նշանակէ» և այլն:

Սխալ է նաև հետևյալ թարգմանությունը. «Птицы фюкос со страхом вылетают из лесов» (էջ 114): «Фюкос»-ը թարգմանությունն է «Յաղագս նշանացի» «փիւկոս» բառի, որը, սակայն, աղավաղված բառ է և պատահաբար նմանվել է «φύκος» բառին: Վերջինս նշանակում է ոչ թե թռչուն, այլ ծովախոտ կամ նրանից ստացվող ներկ, երբեմն էլ՝ ձուկ, խեցզետին: Ռուսերեն թարգմանության մեջ այս խեցզետինը, ձուկը կամ ծովախոտը դարձել են թռչուններ և զարհուրելով թռչում են անտառներից. «со страхом вылетают из лесов»:

Թարգմանիչները «Յաղագս նշանաց» համարում են Շիրակացու «Տիեզերագիտության» աղբյուրը, որովհետև այդ երկու երկերը երբեմն բառացի համընկնում են («даже буквальные совпадения»)՝²⁸ Այս նմանությունները իսկապես կան և դրանք ժամանակին բացահայտել է Գ. Տեր-Մկրտչյանը: Բայց մեր հոգվածի սկզբում արդեն ասացինք, որ դրանք գալիս են ոչ թե «Յաղագս նշանացից», այլ Բարսեղ Կեսարացուց. հետևաբար՝ Շիրակացու «Տիեզերագիտության» աղբյուրը ոչ թե «Յաղագս նշանացն» է, ինչպես կարծել են թարգմանիչները, այլ՝ Կեսարացին:

Վերագառնանք «Յաղագս նշանացի» աղբյուրներին: Այս ժողովածուն պարունակող գրեթե բոլոր նշանների սկզբնատողերն սկսվում են միևնույն «յորժամ» բառով: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ ժողովածուն կազմողի աղբյուրները նույնպես սկսվել են այս բառով: Դա պարզ երևում է Բարսեղ Կեսարացուց քաղված հատվածներում, որոնք բոլորն էլ սկսվում են իսկապես նշված բառով: Սա օգերևութաբանական ձեռնարկներին հատուկ բառ է:

Ղուկասի ավետարանի (զլ. ԺԲ, տ. 54—55) հունարեն և հայերեն տեքստերում նույնպես օգերևութաբանական նշաններն սկսվում են «յորժամ» (ὅταν) բառով:

ὅταν ἰσῆτε νεφέλην ἀνα-
τελλουσαν ἐκ τοῦ θαλάσσης,
εὐθεὶς λέγετε ὅτι ὄμβρος
ἐρχεται, καὶ γίνεται οὕτως.

ὅταν νοσὸν πνέοντα,
λέγετε ὅτι ἄσπας
ἐστὶ, καὶ γίνεται.

Ցորժամ տեսանիցեք
ամպ ծաղեալ յարևմտից՝
իսկոյն ասեք, թէ անձրև
գայ և լինի այնպէս:

Ցորժամ հարաւ շնչեալ՝
ասեք թէ խորշակ լինի
և լինի այնպէս:

Մեղ արդեն ծանոթ № 1973 ձեռագրում գտնում ենք «Յաղագս նշանացի» նման մի օգերևութաբանական ժողովածու, որի հեղինակն օգտագործել է «Յաղագս նշանացը» և դանազան այլ աղբյուրներ: Այս ժողովածուում նույնպես օգերևութաբանական նշանների թվարկումն սկսվում է նշված բառով:

²⁸ «Космография», էջ 26:

Այս տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում նաև «Գիրք վաստակոցը»։ Սույն գիրքը միջնադարում հունարենից թարգմանվել է արաբերենի, արաբերենից հայերենի։ Այս բաղմաստիճան թարգմանությունից հետո էլ հայերեն թարգմանության մեջ սյահայանվել են բնագրի «յորժամ» կամ «երբ» բառերը։

«ԳԻՐԲ ՎԱՍՏԱԿՈՑ»

Վենետիկ, 1877, լ. 11—13

1

Երբ լուսինն լինի երեք առեր
և տեսանես զնա նստագոյն և յիստակ
գիտցիր որ րարոյ նշան է։

2

Երբ ցայթի (ծագէ—Գ. Ա.) Արեգակն և լինի
կարմրագոյն և յետոյ թխագոյն՝ անձրևոյ
նշան է։

3

Յորժամ տեսանես զմրջիւնն, որ
գձուն իւրեանց ի մէկ ծակէն ի մէկ
այլն կրեն՝ նշան է անձրևի։

4

Յորժամ տեսանես զընտանի հաւն ալկի
վաղի և ճիշտի ի տեղաց ի տեղ
նշան է անձրևի։

5

Յորժամ տեսանես զծիծառն աւկի
խաղալ ի վերայ ջրոյն նոյն անձրևի
նշան է։

«ՅԱՂԱԳՈՒ ՆՇԱՆԱՅ»

«Բանբեր Մատենադարան», № 7.

լ. 341, 347, 349

1

Յորժամ երեք օրեայ երեկ
լուսինն և եղբերքն վերաձգեալ
և յստակ և սուրբ լինի
նշանակ է զօղ սյարդութեան։

2

Յորժամ կամի Արեգակն
կանել և առ նովա
ամսոյ շրագոյն, շիկագոյն
և խիտ՝ նշանակ է զամսոյ։

3

Յորժամ մրջմունք զձուս
իւրեանց հաւեն ի ծակոց՝
անձրևա նշանակ է։

4

Յորժամ ընտանի հաւ
կտուին և մեծածայն կոշեն՝
անձրևա նշանակ են։

5

Յորժամ ծիծառունք առ լճովք
թռչին ստէպ ստէպ...
զյուզմունս ամսոց նշանակ է։

Այս օրինակները թելադրում են մտածել, որ Արատոսի բանաստեղծությունը չի կարելի դասել նույնիսկ «Յաղագս նշանացի» աղբյուրների շարքում, որովհետև բանաստեղծության մեջ չկա անգամ հետքն այն ընդհանրությունների, որոնք գտնում ենք «Գիրք վաստակոցում» և այլ նմանօրինակ աղբյուրներում։

«Յաղագս նշանացի» առաջին մասում կարդում ենք. «Յորժամ կամաբն (ծիածանր—Գ. Ա.) ընդ արեմուտս կրկին երեկ՝ անձրևա նշանակ է»։ Իսկ Բարսեղ Կեսարացուց բաղված մասում ասված է. «Յորժամ աղեղն (ծիածանր—Գ. Ա.) յամսս երեկ՝ զսաստիկ անձրևաց (բնագրում՝ «ամսոց») նշանակ է»։ Սրանից սլարդ երևում է, որ բերված երկու տեղեկությունները վերցված են տարբեր հեղինակներից, որոնցից մեկը սովորություն է ունեցել ծիածանի փոխարեն ասել «կամար», իսկ մյուսը՝ «աղեղ»։ Նույնը կարելի է ասել նաև «մլար» և «մոայլ» բառերի կապակցությամբ։ Առաջին մասի հեղինակը մշուշի փոխարեն ասում է «մլար», իսկ երկրորդ հեղինակը՝ «մոայլ»։

Այսպիսով, քննվող ժողովածուն ոչ թե հունարեն մի ամբողջական աղբյուրի թարգմանություն է, այլ արդեն պատրաստի հայերեն դանաղան թարգմանություններից բաղկած նյութերի հավաքածու։ Թարգմանություններից յուրաքանչյուրն ունի իր բառապաշարը։

Ինչպես ասվեց, ժողովածուի առաջին և հիմնական մասում օգտագործված թարգմանությունը ամենայն հավանականությամբ Եվդոքսոս Կնիդացու երկի թարգմանությունն է։ Թարգմանիչը, մեր կարծիքով, Անանիա Շիրակացին է։ Թարգմանությունը մեզ հասել է 971 թ. ընդօրինակված ձեռագրում։ Պարզ երևում է, որ ընդօրինակող գրիչն իր ձեռքին ունեցել է մի հին օրինակ, որն առիթ է տվել երկաթագիր տառերի շփոթի հետևանքով առաջացած մի շարք վրիպակների («պատիղովն», «կոփիք», «որոշտուկ», «գիւղնիովք» և այլն) և բացթողումների (որոնք բացահայտվում են № 1973 ձեռագրի համեմատության միջոցով)։

Անանիա Շիրակացին ապրել է այս ձեռագրի ընդօրինակման թվականից շուրջ 300 տարի առաջ։ 971 թ. ընդօրինակված ձեռագիրը կարող է արտագրված լինել այսքան ժամանակ առաջ գրված մի ձեռագրից։ Անշուշտ, հնարավոր է նաև, որ ընդօրինակության համար հիմք ծառայած ձեռագիրն ավելի հին եղած լիներ։ Բայց ավելի հին ժամանակներում (V—VI դդ.) մենք չենք գտնում Շիրակացուց առավել հարմար մի գիտնական, որը հունարենից թարգմանած լինի Եվդոքսոս Կնիդացու (կամ մեկ ուրիշի) օգերևութաբանական ձեռնարկը։

Նմանօրինակ ձեռնարկները ժամանակին շատ տարածված էին և ժողովրդական տնտեսության մեջ օգտագործվում էին որոշակի գործնական նպատակներով (եղանակը կանխագուշակելու և բոս աշգձ վարելու համար երկրագործական, ձանապարհորդական, որսորդական և այլ աշխատանքներ)։ Անհնարին է, որ հունական կրթություն ստացած Շիրակացին անծանոթ լիներ նմանօրինակ հանրածանոթ օգերևութաբանական ձեռնարկներին։ Մյուս կողմից էլ՝ նրա աշխատություններում ոչ մի հետք չկա «Յաղագս նշանացում» հավաքված օգերևութաբանական նշաններից։ Սա չի կարելի բացատրել Շիրակացու անտեղյակությամբ։ Մեզ հավանական թվացող միակ բացատրությունն այն է, որ հայ մեծ հանրագետը օգերևութաբանական երկը թարգմանելուց հետո ավելորդ է համարել իր աշխատություններում կրկնելու միևնույն տեղեկությունները։

Այսպիսով՝ «Յաղագս նշանացը» մեզ ներկայանում է որպես անծանոթ մի հեղինակի կողմից կազմված ժողովածու, որը սխալմամբ է վերագրվել Անանիա Շիրակացուն։ Ժողովածուի մեջ օգտագործված են զանազան հեղինակների աշխատություններ, որոնցից գլխավորը հունարենից թարգմանված մի օգերևութաբանական աշխատություն է։ Վերջինս պատկանում է Եվդոքսոս Կնիդացուն և կապ չունի Արատոս Սուլացու հետ։ Եվդոքսոսին VII դարում հայերեն է թարգմանել, կրկնում ենք, Անանիա Շիրակացին։

№ 1973 ձեռագրի համեմատությունից պարզվում է, որ Շիրակացու թարգմանությունը ամբողջությամբ մեզ չի հասել։ Նրա սկիզբն ու վերջը կորել են։ Հիշյալ ձեռագրում պահպանվել են կորած մասից մնացած մի շարք օգերևութաբանական նշաններ, որոնցից 14-ը քիչ հետո կներկայացնենք ընթերցողին։ Այս նշաններից առաջ, անմիջապես հենց նախորդ տողից սկսած, № 1973 ձեռագրում ընդօրինակված են (էջ 226 բ—227 բ) ավելի քան 20 նշաններ, որոնք բոլորն էլ մեզ արդեն ծանոթ են «Յաղագս նշանացի» տպագիր բնագրից։

Մեր խոսքը մինչև այժմ վերաբերում էր «Յաղագս նշանացի» առաջին և հիմնական մասին: Սրան հաջորդող երկրորդ մասը հավանաբար կաղմվել է Շիրակացուց հետո: Դա երևում է այդ մասում գտնվող հետևյալ նշանից. «Յոր-ժամ ընդ մտանել արեգական ամպքն կարմրանան, զոր ուսանի խանձումն ամ-պոյ ասեն՝ նշանակէ պարզոյ» («Բանբեր Մատենադարանի», էջ 358): Մեր ընդգծած «ոմանք խանձումն ամպոյ ասեն» արտահայտությունը, կարծես թե, ակնարկված է անառակելիորեն Շիրակացուն պատկանող «Տիեզերագիտու-թյան» հետևյալ նշանը. «Յորժամ ի մուտս (Արեգակը— Գ. Ա.) զյետոյսն խանձիցէ՝ զերկինս կարմրացուցանելով՝ զառօրէայ պարզոյ յայտ առնէ»²⁹:

«Յաղագս նշանացի» մասին մեր ասելիքն ավարտելուց առաջ ուղղենք այս ժողովածուի ձեռագրերին վերաբերող երկու տեղեկություն, որոնք տեղ են գտել Անանիա Շիրակացու երկերի ուսումնասիրության և հրատարակության գործում իր անուրանալի վաստակն ունեցող պրոֆ. Ա. Աբրահամյանի հրատա-րակության մեջ («Անանիա Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944, էջ 137): Այստեղ «Յաղագս նշանացը» պարունակող ձեռագրերի շարքում, զուտ պատահական վրիպակի հետևանքով, նշված է Մատենադարանի № 247 ձե-ռագիրը, որը ավետարան է: Նրա փոխարեն պետք է լինի № 267Տ:

Երկրորդ ճշգրտումը վերաբերում է Մատենադարանի № 1999 ձեռագրին: Պրոֆ. Ա. Աբրահամյանը հայտնում է, որ այս ձեռագրում «բերված է մի հատ-ված Շիրակացու «Յաղագս ամպոց և նշանացից» (էջ 138): Սրանից էլ եզրա-կացվում է, թե «Յաղագս նշանացը» «Շիրակացու Տոմարի մի հատվածն է»: Այս կարծիքը նույնությամբ քաղել է նաև Հ. Բարթիկյանը, որը նույնպես չի նկատել, որ № 1999 ձեռագրում բերված հատվածը ոչ թե «Յաղագս նշանա-ցից» է, այլ Շիրակացու «Տիեզերագիտությունից» (ուստի՝ «Յաղագս նշանացը» չի կարող գիտվել որպես Շիրակացու «Տոմարի» հատված):

Ցույց տանք «Տիեզերագիտության» այն տեղը, որի հիման վրա կաղմվել է № 1999 ձեռագրի հատվածը.

«Տիեզերագիտություն», էջ 42

Ձև. № 1999

Երեքօրեայ ժամանակի յորժամ վնիտ
երևեսցի (լուսինն— Գ. Ա.)՝ զյտակ
պարզոց յայտ առնէ: Եւ յորժամ ի
մահիկեղբուն զնշան կարմրութեան
կամ զմթութեան ունիցի՝ ջուրք
բազումք յամպոց յերկիր հեղուն:

Յորժամ իուսինն երեքօրեայ
լինի (կամ շորեքօրեայ), եթէ
յտակ և սուրբ է՝ պարզ նշանակէ,
ապա թէ ի մահիկեղբուն, այսինքն՝ ի խոնարհ՝
մռայլ ունի՝ անձրե նշանակէ:

* *

«Բովանդակության կողմից,— գրում է Գ. Տեր-Մկրտչյանը («Արարատ», 1896, էջ 100),— այս փոքրիկ գրությունը («Յաղագս նշանացը» — Գ. Ա.) զըլ-խովին տարբերվում է մեր տոմարագիտական-աստղարաշխական մատենա-գրության մեջ եղած բաղմաթիվ նման գրվածքներից: Սա մի զուտ գիտնական

²⁹ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 51: Այս նշանը № 1973 ձեռագրում (էջ 140ա) աղավաղվել է այսպես. «Թէ ի մուտս արևուն ամպ խան-ձել տեսանես՝ անձրե նշանակէ»:

դրվածք է, բոլորովին աղասու աստղագիտական ախտարական տարրերից... Եվ այս մի շատ բացառիկ երևույթ է, գրեթե յուր տեսակի մեջ միակը, մեր հին մատենագրության մեջ»:

Հիրավի բացառիկ սույն հուշարձանը մենք ներկայացրինք համապատասխան միջավայրում. Աստվածաշունչ, Եվդոքսոս Կնիդացի, Արատոս Սոլացի, Թևոփրաստոս, Վիրգիլիոս, Բարսեղ Կեսարացի, Անանիա Շիրակացի, «Գիրք վաստակոց», № 1973 ձեռագրում պահպանված օգերեութաբանական ժողովածու և այլն: Այս ոլորտում ավելի ղգալի է դառնում խնդրո առարկա բնագրի առավել ճշգրտված դիտական հրատարակության և նրա հիման վրա կատարվելիք ուսուերեն (և այլալեզու) նոր թարգմանության անհրաժեշտությունը: Այս գործին իր որոշակի նպաստը կբերի անշուշտ նաև № 1973 ձեռագիրը (որի մի տարբերակը տե՛ս «Բաղմավես», 1896, էջ 251): «Յաղագս նշանացի» որոշ հատվածներ այս ձեռագրում պահպանվել են ավելի ճիշտ ձևով: Ուշադրության արժանի են առանձնապես հետևյալ բառերն ու արտահայտությունները, որոնք կարող են օգնել «Յաղագս նշանացի» որոշ կասկածելի տեղերի պարզաբանմանն ու ճշգրտմանը. «Յորժամ կղղոյ կամ լերանց այրքն» (փխ. «յորժամ երկրի կամ կղղոյ ծայրք»), «Յորժամ մրջմունք ղձուս իւրեանց և ղձագ, կերակուրս արտաքս հանեն» (փխ. «մրջմունք ղձուս իւրեանց հանեն ծակուց»), «են գորտք, որ կոչին գիւռնիոսք» (փխ. «գիւռնիովքն») և այնպես մանրիկ են, զի և տղընկունք (փխ. «տըվկունք») ուտեն ղնոսա», «առանց ամսոյ անձրև (փխ. «առանց ամսոյ») նշանակէ», «Յորժամ արջառք յերկինս գլխամբարձ են և զցոկունսն ի վեր ունին (ընդգծված մասը «Յաղագս նշանացում» բացակայում է), «Յորժամ ծովային կամ գետային հաւք անդադար մրտխղճին որպէս թէ հաւասար (փխ. հարթ) ջրոյն լինիցին» և այլն:

Բերենք այս ձեռագրում (էջ 228) պահպանված հիշյալ 14 օգերեութաբանական նշանները:

«Յորժամ ի ծայրս լերանց միայն նստիցի ամսլ և այլ ամենայն օդքն անամսլ են՝ յորմէ կողմանէ թերի երեւի թէ գոյ ամսլ՝ անդի կողմանէ լինելոց է հողմ:

Յորժամ աստիղք որպէս պաղպաղակ երեւին և շարժին երկար և ի շարժելոյ շիկանան՝ սաստիկ հողմ նշանակէ:

Յորժամ ճրագի հուրն հանդարտ ելանէ և յորժամ բուէճք հանդարտ ձայնեն՝ զսպառումն ձմերան նշանակէ:

Յորժամ պարզ է և սստեղքն խաւարչուտ երեւին առանց ամսոյ տեսանելոյ, այլ միայն ի մլարէ առագաստեալ լինի և ոչ լուսին ինչ լեալ պատճառ թխութեան, ղոր արժան է կարծել՝ չէ խաղաղութեան նշան, այլ ձմերան:

Յորժամ ագռաւք ցայգ ձայնեն ղամսլ նշանակէ:

Յորժամ խոյք յերեկօրես քառաշին՝ ղամսլ նշանակէ:

Յորժամ պարզ է և սարդի ոստայնն նուրբ երեւին՝ յանօսր օդոց լինին:

Յորժամ հուր թխագոյն ելանլ ի ճրագացն առ պատրոյկովն՝ կորեկի նման հիւթ լեալ, որպէս ղձին անօսրեալ, զձմեռնն նշանակէ:

Յորժամ կայծինքն պայծառ և ի միջին թուխ՝ ղամսլ նշանակէ:

Յորժամ արջառ և այլ անասունք ղերկիր փորեն՝ ղղէմս ի հարաւ արարեալ՝ զձմեռն նշանակէ...

Եւ յորժամ սակաւ փորեն՝ չլինի սակաւ շափաւոր ձմեռն. ոչ կարի ցամաքին և ոչ կարի ձիւնաբեր:

Յորժամ եզինք ջոկեալ զուղորդն՝ ճանապարհն կայտուելով երթան՝ տվաբաժականացն հանգիստ ցուցանելով՝ զձմեռն նշանակէ:

Յորժամ մկունք կայտուելով ստէպ ստէպ երթան ի տուն՝ զձմեռն նշանակէ: Յորժամ շունք վերկիր փորեն՝ զձմեռն նշանակէ»:

*

«Յաղագս նշանացի» կապակցութեամբ հարկ կա անդրադառնալու նաև հունարեն *χεῖρος* և *παῖς* բառերի տառադարձութեանը:

χεῖρος բառը «Յաղագս նշանացի» ձեռագիր և տպագիր օրինակներում, ինչպես նաև հայերեն բառարաններում հանդիպում է չորս տառադարձված ձևերով՝ «կուիւի», «կուիւիւս», «եւիւիւկոս», «կեւիւկոս»:

1896 թ. «Արարատում» (էջ 100) և միևնույն թվականի «Բաղմավեպում» (էջ 251) Գ. Տեր-Մկրտչյանը և «Խ.» ստորագրությամբ հանդես եկած մեկ ուրիշ բանասեր փորձել են գտնել բառը, բայց չի հաջողվել: Գ. Տեր-Մկրտչյանը «կուիւիւ»-ը թողել է նույնությամբ, իսկ «փիւկոս»-ի փոխարեն առաջարկել է «կուիւիւս», որը պարզապես վրիպակ է և գոյություն չունի որևէ լեզվում: «Փիւկոս»-ի մասին նա գրել է. «Փիւկոս հունարեն, եթե չեմ սխալվում, նշանակում է իշամեղու: Բայց իրականում «փիւկոս»-ը կապ չունի *χεῖρος*-ի հետ և աղավաղվելով, պատահաբար նմանվել է հունարեն մեկ ուրիշ բառի՝ *ψυχρός*-ին, որը «իշամեղու» չի նշանակում:

«Բաղմավեպի» հոգվածի հեղինակը հայտնում է, որ Վենետիկի Մատենադարանում պահվող ձեռագրում «կուիւիւ»-ի և «եւ փիւկոս»-ի փոխարեն երկու դեպքում էլ գրված է «կեւիւկոս»³⁰: Այս բառը նա նույնացնում է հունարեն *χειρὶς* կամ *παῖς*-ի (*sic!*) բառերի հետ, իսկ «փիւկոս»-ը՝ *ψυχρός*-ի հետ: Ինչպես տեսնում ենք, այս բանասերը նույնպես արգյունքի չի հասել:

Ս. Ամատունին, Հ. Աճառյանը և Ստ. Մալխասյանը նույնպես չեն գտել բառի աղբյուրը *χεῖρος*-ի հետ և բառարաններում զբանցել են աղավաղված «կուիւիւ», «կուիւիւս» ձևերը: Հ. Բարթիկյանը աղբյուր նկատելով հանդերձ կրկնել է նախորդների սխալը և քննարկվող բառը տպագրել է դարձյալ աղավաղված ձևով: Լստ որում նա չի անդրադարձել «կեւիւկոս» ձևին, որը նա կարող էր գտնել կամ № 1973 ձեռագրում կամ էլ «Բաղմավեպում» (1896, էջ 251): Սույն ձևը («կեւիւկոս»), ինչպես նաև *χεῖρος* բառը ցույց են տալիս, որ «Յաղագս նշանացի» նախնական բնագրում հունարեն բառը տառադարձված է եղել «կեւիւկոս» ձևով:

«Յաղագս նշանացում» տառադարձության ենթարկված մյուս բառերի օրինակով կարելի է ցույց տալ այդ բառի տառադարձության ընթացքը: Ամենագիպով օրինակը «պապիկը»³¹ բառն է, որը համապատասխանում է հունարեն *παπῖς*-ին: Այս բառի տառադարձության ժամանակ հայ թարգմանիչը կատարել է երեք գործողություն: Առաջին. կրճատել է հունարեն կրկնակի *παπῖς*-ը մեկը, որպես հայերենի համար ավելորդ հնչյուն, երկրորդ՝ մնացած *παπῖς*-ին

30 Հմմտ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1973, էջ 227 ր:

31 Տպագրված է՝ «պապիկը»: Ուղղել ենք ըստ № 1973 ձեռագրի:

ավելացրել է «-իկ» մասնիկը, երրորդ՝ հունարեն հոգնակի թվի ու վերջավորությունը փոխարինել է հայերենի «ք» վերջավորությամբ: Այս գործողությունները, եթե նույնությամբ կիրառենք չԵՄԶՕԴ-ի նկատմամբ, կստացվի «կեփիկ», հետևյալ եղանակով. կրճատվում է հունարեն գրեթե նույնաձայն ռ հնչյուններից մեկը (ռ-ն), որպես հայերենի համար ավելորդ հնչյուն, երկրորդ՝ մնացած չԵՄ-ին ավելացվում է «-իկ» մասնիկը, երրորդ՝ հունարեն հոգնակի թվի ու վերջավորությունը փոխարինվում է հայերենի «ք» վերջավորությամբ: Ստացվում է «կեփիկք»:

Վերականգնենք «Յաղագս նշանացի» համապատասխան հատվածը. «Յորժամ պարզոյ կեփիկի ի մայրեաց թռչին ընդդեմ իրերաց զարհուրելով՝ նշանակեն զյուզմունս ամպոց և հողմոց: Կեփիկս այս հաւիկ մի խիկ, որ ի փոքր ի շնչմանէ շարժի»: Թարգմանենք. «Երբ կեփիկները պարզ եղանակին, անտառներից զարհուրելով թռչում են ընդդեմ իրար, դա նշան է ամպերի հուլման և քամիների: Այս կեփիկ թռչունը մի խիկ թռչնակ է, որը փոքրիկ շնչումից շարժվում է»:

Կատարված բառաքննությունների հիման վրա կարելի է Ս. Ամատունու, Հ. Աճառյանի և Ստ. Մալխասյանցի բառարաններում տեղ դրած «կոփիւի» («կոփիւքոս»), «պապիւ» և «պատիղովն» սխալ բառերն ուղղել համապատասխանաբար այսպես՝ «կեփիկ», «պապիկ», «պարիղովն»:

О МЕТЕОРОЛОГИЧЕСКОМ ТРУДЕ, ПРИПИСЫВАЕМОМ АНАНИИ ШИРАКАЦИ

Доктор филол. наук Г. В. АБГАРЯН

(Р е з ю м е)

В рукописи № 2679 (971 г.), хранящейся в Матенадаране им. Маштоца, сохранился анонимный метеорологический труд, скопированный переписчиками вместе с трудами Анания Ширакаци. Древнеармянский текст этого ценного сочинения обнаружил и издал в 1896 г. Г. Тер-Мкртчян.

Р. Бартикян в своей статье, опубликованной в 1964 г. («Вестник Матенадарана», № 7, стр. 331—363), выдвинул предположение, согласно которому «изданный в 1896 г. в журнале «Арагат» Г. Тер-Мкртчяном текст под именем известного армянского философа, математика и астронома Анания Ширакаци «Об облаках и знамениях» есть не что иное, как прозаический перевод Διοτρηδεία греческого поэта Арата.

Путем сравнения метеорологического труда «О небесных знамениях», приписываемого Анании Ширакаци (VII в.), с греческим текстом Арата из Сол (315—240/239 гг. до н. э.) в статье показывается несостоятельность предположения о тождестве авторов названных сочинений.

«О небесных знамениях» представляет собой сборник различных материалов, составленный не Аратом и не Ширакаци, а другим неизвестным армянским ученым-метеорологом. В числе источников, использован-

ных в сборнике, находим метеорологический труд Евдокса Книдского (390—337 гг. до н. э.), который, по мнению автора, переведен на армянский язык Ширакаци (греческий оригинал произведения Евдокса утерян, сохранился только этот перевод).

В статье рассматривается хранящаяся в Матенадаране нм. Маштоца рукопись № 1973, с помощью которой можно уточнить и дополнить опубликованный текст сборника «О небесных знамениях», отмечаются ошибки в русском переводе, делаются другие текстологические замечания, восстанавливается искаженная в древних рукописях армянская транскрипция греческих слов *χερσος*, *παππος*, *παρτήλα*.